

ՀՈՒՈՎՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հիմնակետ ունենալով այն հայտնի ճշմարտությունը, որ ժամանակակից հայոց լեզվում չկա քերականական որևէ իրողություն, որ այս կամ այն չափով իր հիմքերը չունենա մեր հին լեզվի՝ գրաբարի ընդերքում, պետք է ասել, որ մի այնպիսի կարևոր քերականական կարգ, ինչպիսին հոլովի քերականական կարգն է, չէր կարող դուրս մնալ պատմական զարգացման համարման ընթացքից և չկապվել գրաբարի հոլովական համակարգի հետ:

Այս տեսանկյունից քննելով ժամանակակից հայոց լեզվի հոլովները ամբողջության մեջ, տեսնում ենք, որ նրանք այլ բան չեն, քան հենց հին հայերենի՝ գրաբարի հոլովական համակարգի պատմական զարգացման դրսևորումն ու արտահայտությունը:

Ակնհայտորեն այդ են հաստատում այն փոփոխությունները, որ կրել են հոլովները հայոց լեզվի երկարատև զարգացման ընթացքում: Դրանք այնպիսի փոփոխություններ են, որոնք ամենևին էլ չեն խարխլել հայոց լեզվի հոլովական համակարգը և մեծ, արմատական զանազանություն առաջ բերել նրա մեջ:

Եվ իրո՞ք. լեզվական փաստերը, ինչպես պարզ հայելու մեջ, ցույց են տալիս, որ՝

ա) Ուղղակաճը, շարունակել է մնալ իբրև բառի սկզբնաձև հոլովական ընդհանուր համակարգում՝ մյուս հոլովների հետ կազմելով մի ամբողջություն, հմմտ., օր.՝

	Գրաբար		Աշխարհաբար	
Ուղղ.	սիրտ	սիրտք	սիրտ(ը)	սրտեր(ը)
Սեռ.	սրտի	սրտից	սրտի	սրտերի
Տր.	սրտի(ն)	սրտից	սրտի(ն)	սրտերի(ն)
Հայց.	(զ)սիրտ	(զ)սիրտս	սիրտ(ը)	սրտեր(ը)
Բաց.	ի սրտէ	ի սրտից	սրտից	սրտերից
Գործ.	սրտիւ	սրտիւք	սրտով	սրտերով
Ներգ.	ի սրտի	ի սիրտս	սրտում	սրտերում

II

Ուղղ.	երեխայ	երեխայք	երեխա(ն)	երեխաներ(ը)
Սեռ.	երեխայի	երեխայից	երեխայի	երեխաների
Տր.	երեխայի	երեխայից	երեխայի(ն)	երեխաների(ն)
Հայց.	(զ)երեխայ	(զ)երեխայս	երեխա(ն)	երեխաներ(ը)
			երեխայի(ն)	երեխաների(ն)
Բաց.	յերեխայէ	յերեխայից	երեխայից	երեխաներից
Գործ.	երեխայիւ	երեխայիւք	երեխայով	երեխաներով
Ներգ.	յերեխայի	յերեխայս	(երեխայում)	(երեխաներում)

բ) Ինչպես գրաբարում, այնպես էլ աշխարհաբարում սեռականն ու տրբարականը ձևով հիմնականում նման լինելով՝ որոշ դեպքերում նաև տարբերվել են իրարից. մի խումբ բառերի եզակի տրականը գրաբարում կազմվել է սեռականին ոչ հատուկ -ում հոլովակերտ մասնիկով (ինչպես՝ հին-հնոյ-հնում, առաջին-առաջնոյ-առաջնոյ // առաջնում, այլև՝ մարդ-մարդոյ-մարդոյ//մարդում և այլն) և տարբերվել նրանից, իսկ ժամանակակից հայոց լեզվում, ինչպես հայտնի է, տրականը սեռականից տարբերվում է որոշյալ հոգով, որ գործածվում է որոշյալ առման դեպքում՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում, հմմտ., օրինակ՝ ֆար(ը)—ֆարի—ֆարի(ն)—ֆարեր(ը)—ֆարերի—ֆարերի(ն). աշակերտ(ը)—աշակերտի—աշակերտի(ն)—աշակերտներ(ը)—աշակերտների—աշակերտների(ն). եղբայր(ը)—եղբոր—եղբոր(ը)—եղբայրներ(ը)—եղբայրների—եղբայրների(ն) և այլն:

գ) Ինչպես գրաբարում, նոր հայերենում՝ աշխարհաբարում ևս իրարից շատ ավելի խստորեն են տարբերվում որոշ (հատկապես՝ անձնական) դերանունների սեռականն ու տրականը, հմմտ. գրաբար՝ ես—իմ—ինձ—մեք—մեր—մեզ, աշխարհաբար՝ ես—իմ—ինձ—մենք—մեր—մեզ. դու—քո—քեզ—դուք—ձեռ—ձեզ և դու—քո—քեզ—դուք—ձեռ—ձեզ. նա—նորա—նմա—նոքա—նոցա—նոցա և նա—նրա—նրան—նրանք—նրանց—նրանց. (ինք)ն—իւր—իւրեան—ինքը—իւր—իւրեան. ո՞վ//ո՞վ—ոյր—ո՞ւմ և ո՞վ—ո՞ւմ—ո՞ւմ:

դ) Հայցական հոլովը գրաբարում եթե եզակի թվում միայն զ նախդրով, իսկ հոգնակի թվում նաև ս հոլովակերտ մասնիկով է տարբերվում, ինչպես, օրինակ՝ տուն—(զ)տուն—տունք—(զ)տունս, թշնամի—(զ)թշնամի—թշնամիք—(զ)թշնամիս, ազգութիւն—(զ)ազգութիւն—ազգութիւնք—(զ)ազգութիւնս, արքայ—(զ)արքայ—արքայք—(զ)արքայս և այլն, ապա նոր հայերենում այն մի՛ անորոշ առման դեպքում շարունակել է նման մնալ, իսկ այլ՝ որոշյալ առման դեպքում թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում տարբերվել նրանից, հմմտ. Առաջի տան իմոյ կայ ծառ մի— Իմ տան առաջ կա մի ծառ— Առաջի տան իմոյ կան ծառք բազումք— Իմ տան առաջ շատ ծառեր կան և նա հատանէ ծառ մի յանտառի— նա մի ծառ է կտրում անտառում, նա հատանէ (զ)ծառս բազումս յանտառի— նա շատ ծառեր է կտրում անտառում. Մայր սիրէ (զ)աղջիկ իւր— Մայրը սիրում է իր աղջկան, Մայր սիրէ (զ)աղջկունս իւր— Մայրը սիրում է իր աղջիկներին և Աղջիկ սիրի ի մօրէ— Աղջիկը սիրվում է մորից— Աղջկունք սիրին ի մօրէ— Աղջիկները սիրվում են մորից. Ընկեր իմ ունի որդի մի— Իմ ընկերը մի որդի ունի և այլն:

ե) Եթե բացառականը գրաբարում արտահայտվել է ի նախդրով և եզակի թվում է հոլովակերտով կամ առանց հոլովակերտի, հոգնակի թվում պարտադիր կերպով՝ -ց հոլովակերտ մասնիկով (հմմտ., օրինակ՝ ի բանէ—ի բանից, ի ձկանէ—ի ձկանց, ի ծովէ—ի ծովուց, ի ֆաղաֆէ—ի ֆաղաֆաց, ի դստերէ—ի դստերց, յանձնէ—յանձանց..., ի գործոյ— ի գործոց, յորդայ—յորդուց, ի տիտանայ—ի տիտանաց և այլն), ապա արևելահայ աշխարհաբարում պարզեցման ենթարկվելով՝ արտահայտվում է հիմնականում -ից, իսկ -ու հոլովման դեպքում, այն էլ՝ միայն եզակի թվում, -ուց վերջավորությամբ կամ բառահարաբերական ձևությամբ, ինչպես, օրինակ՝ ֆաղաֆից—ֆաղաֆներից, օրից//օրվանից—օրերից, ընկերոջից—ընկերներից, հորից—հայրերից, որոշումից—որոշումներից, պետությունից—պետություններից, այգուց—այգիներից, մարդուց—մարդկանցից, տարուց//տարվանից—տարիներից և այլն:

զ) Եթե գործիականը գրաբարում արտահայտվել է մի քանի հոլովակերտ՝ -ւ, տ (օր.՝ բանիւ—բանիւտ, հրամանաւ—հրամանաւտ > հրամանօք), -վ, վ (օր.՝ գետով—գետօվ, որդով—որդովտ), -բ, բ (օր.՝ անձամբ—անձամբք, երդամբ—երդամբք, մեծութեամբ—մեծութեամբք, տամբ—տամբք),

-բ (օր.՝ գարդու—գարդուֆ, նակատու—նակատուֆ) մասնիկներով, ապա աշխարհաբարում ընդհանրապես շատ ավելի պարզվելով՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում կազմվում է -ով—ով, ինչպես՝ բարեկամով—բարեկամներով, օրով—օրերով, դռնով—դռներով, եղբորով—եղբայրներով, ֆրոշով—ֆույրերով և այլն*:

է) Եթե ներգոյականը (կամ՝ ներգոյականի նշանակութունը) գրաբարում արտահայտվել է ի նախորդով՝ եզակի թվում տրականից կամ բառի ուղիղ ձևից, ինչպես՝ ի ֆաղաֆի, ի ծովու, ի դստեր, ի տան, յանձին... , ի գործ, ի բերան, յոսկի և այլն, իսկ հոգնակի թվում՝ անխտիր հայցականից, ինչպես՝ ի ֆաղաֆս, ի ծովս, ի դստես, ի տունս, յանձինս... , ի գործս, ի բերանս, յոսկիս և այլն, ապա նոր հայերենում՝ արևելահայ աշխարհաբարում, այլ դրսևորում է ստացել՝ արտահայտվելով մի նոր՝ -ում վերջավորությամբ կամ ձևույթով**:

Իր զարգացման ընթացքում կրելով հոլովական այսպիսի փոփոխություններ և միաժամանակ ստեղծելով հոլովման մի նոր համակարգ՝ հայոց լեզուն հաստատուն և անգամ կարելի է ասել՝ հիմնականում անփոփոխ է պահել տարբեր հոլովների արտահայտած հարաբերություններն ու նշանակությունները: Եվ հետևաբար՝ ինչպես գրաբարի, այնպես էլ աշխարհաբարի հոլովները որոշվում են ո՛չ թե բառի փոփոխված՝ սոսկ արտաքին ձևով, հոլովակերտ մասնիկով կամ վերջավորությամբ, այլ նրանց թե՛ ձևով և թե՛ արտահայտած նշանակությամբ կամ հարաբերությամբ միասին վերցրած:

Ընդ որում՝ երկու դեպքում էլ ամենին ոչ պատահականորեն կան ձևով և՛ նման, և՛ տարբեր հոլովներ. ձևով տարբեր հոլովները իրենց հատուկ կազմությամբ եթե շատ հեշտորեն են զանազանվում և գիտակցվում, ապա ձևով նման հոլովները, ընդհակառակն, որոշակի դժվարություններ են հարուցում և անմիջապես չէ, որ ընկալվում են ու ըմբռնվում:

Անկախ, սակայն, դրանից, երկու դեպքում էլ հոլովների որոշման համար հիմունք ու ուղենիշ է ծառայում նրանց արտահայտած հարաբերությունը (նշանակությունը կամ բովանդակությունը), ըստ որի էլ, ասենք, ժամանակակից հայոց լեզվում բացառականը որոշվում է ոչ թե նրանով, որ վերջանում է -ից-ով (գրքից, փողոցից, տիրոջից, գեկուցումից, հուզումնեֆից...) կամ -ուց-ով (սիրուց, գրելուց, մարդուց, թշնամուց...), գործիականը՝ ոչ թե նրանով, որ վերջանում է -ով-ով կամ երբեմն -բ-ով (գրելով, երեխայով, անտառով, ուրախությամբ, արշամբ...), ներգոյականը՝ ոչ թե սոսկ նրանով, որ վերջանում է -ում-ով (ղպրոցում, երկնքում, հիմնաբևույթում, ամսում...), այլ՝ նրանով, որ մեկը անշատում, հեռացում, բացառում, մեկը՝ գործիք կամ մի բան կատարելու միջոց, իսկ մյուսն էլ մի ինչ-որ տեղում կամ ժամանակում մի բան անելու նշանակություն է արտահայտում:

Դրա հետ մեկտեղ, անշուշտ, չի կարելի ժխտել կամ անտեսել, որ հիշյալ նշանակությունները շատ ցայտունորեն են արտահայտվում հենց հիշյալ վերջավորությունների միջոցով: Մինչդեռ նման դրսևորումից զուրկ են ձևով նման և արտաքուստ, հնչյունական կազմով իրարից չզանազանվող հոլովները՝ ուղղականը և ուղղականաձև հայցականը (հմմտ. «Վարդը գեղեցիկ է» և «Ես սիրում եմ գեղեցիկ վարդը»), սեռականը, անորոշ տրականը և անորոշ

* Միայն -ան, -յան («ա») հոլովումների դեպքում է, որ մի խումբ բառերի գործիականը եզակի թվում գործածվում է նաև գրաբարյան ձևով՝ -բ մասնիկով, օրինակ՝ սովորությամբ/սովորությունով, արշամբ/արշունով, որոշմամբ/որոշումով և այլն:

** Արևմտահայերենում ներգոյականի նշանակությունը, ինչպես հայտնի է, արտահայտվում է միայն սեռականի և մեջ կապի միջոցով, օրինակ՝ գրքին մեջ, ծովերուն մեջ, գիշերին մեջ, օրվան մեջ և այլն:

հայցականը (հմմտ. «Աշակերտի գիրքը նոր է», «Ծս մոտեցա մի աշակերտի», «Նա չի պարսավում ոչ մի աշակերտի»), տրականը և տրականաձև հայցականը (հմմտ. «Արամը գիրքը հանձնեց իր ընկերոջը» և «Արամը սրտանց սիրում է իր ընկերոջը»):

Հոլովական այսպիսի ձևերի նմանությունն էլ ահա 20-րդ դարի սկզբներից մինչև այսօր գայթակղության քար է դարձել հայ քերականագիտության համար: Բոլոր նրանք, ովքեր ձևով նման հոլովները ոչ թե տարբեր, այլ նույն բառաձևերն են դիտում, բնականաբար մերժում են հայցականն ու սեռականը և գտնում, որ ժամանակակից հայոց լեզվում հոլովները ոչ թե 7-ը, այլ՝ 5-ն են: Իսկ բոլոր նրանք, ովքեր (մեծ մասամբ ներզգացողությամբ) ձևով նման հոլովները ոչ թե նույն, այլ տարբեր բառաձևեր կամ իբրև այդպիսիք են ընկալում, սեռականն ու հայցականը ևս ինքնուրույն ու անկախ հոլովներ են համարում և վճռականորեն մերժում 5 հոլովի տեսակետը:

Արդ՝ հարց է ծագում. այդ երկու մոտեցումներից ո՞րն է ճիշտն ու ընդունելին: Եթե հոլովը, իբրև քերականական կարգ, որոշվում է այն հարաբերությամբ, որ արտահայտվում է հոլովական ընդհանուր համակարգում, ապա թե՛ ուղղականին և տրականին նմանվող հայցականը, թե՛ տրականին ու հայցականին նմանվող սեռականը նրանցից տարբեր բառաձևեր և միաժամանակ տարբեր, ինքնուրույն ու անկախ հոլովներ են: Իսկ սա էլ իր հերթին ցույց է տալիս, որ տվյալ դեպքում մենք իրո՞ք գործ ունենք ֆերականական համաճեղճության, այսինքն՝ ձևով կամ հնչյունական կազմով իբար նման, ֆերականական բովանդակությամբ կամ նշանակությամբ իբարից տարբեր իրողության հետ, որ, սակայն, անտեսել է Մ. Աբեղյանը իր հոլովական տեսությունը ստեղծելիս և ձևով նման հոլովները նույնացնելով իրար՝ ձևականորեն աշխարհաբարի հոլովները 5-ն է համարել: Այդպիսով, նա տարբեր հարաբերություններ արտահայտող, բայց նմանաձև հոլովները ոչ թե տարբեր, այլ միևնույն բառաձևեր է դիտել և առաջինն էլ հենց ինքը փորձել հիմնավորել, որ հայերենի պատմական զարգացման ընթացքում որոշ հոլովների նույնացում է տեղի ունեցել:

Մ. Աբեղյանը իր հոլովական տեսությամբ¹ առանձնապես ծանրացել է հայցականի վրա և հետևողականորեն այն տեսակետը դավանել, որ ժամանակի ընթացքում այն հիմնովին նմանվել է ուղղականին կամ տրականին և զրկվելով հոլովական իրավունքից՝ դուրս մղվել հայերենի հոլովման ընդհանուր համակարգից:

Իրապես, սակայն, հայցական հոլովը ձևական փոփոխություն կրելով՝ ոչ թե իր նշանակությունները կամ արտահայտած իմաստները փոխանցել է ուղղականին կամ տրականին, այլ պահպանել է դրանք՝ ֆերականական համաճեղճություն կազմելով նրանց հետ:

Դա լեզվի ներքին պահանջով անհրաժեշտաբար առաջ եկած իրողություն է, որը վառ արտացոլված ենք տեսնում, օրինակ, 17-րդ դ. հիշատակարաններում: Այնտեղ հանդիպում ենք շատ ու շատ օրինակների, որոնք հստակորեն ուրվագծում են հայցականի ձևավորման ընթացքը և ցույց տալիս, որ նրանով արտահայտվող անձի անունները ուղղականով արտահայտվող անուններից տարբերելու համար անհրաժեշտություն է զգացվել այն կիրառել մի այլ՝ տրականին նման ձևով:

Դրանով իսկ հայցականը յուրահատուկ ձևավորում է ստացել և, ամեն-

¹ Այդ մասին տե՛ս մեր՝ «Մանուկ Աբեղյանի հոլովական տեսությունը», ՊՂԶ, 1995, № 2:

նեին ոչ պատահականորեն, տակավին խառն պատկեր է ներկայացնում: Ընդ որում՝

ա) Կան դեպքեր, երբ այն շարունակել է գործածվել և՛ զ նախորդով, և՛ առանց զ նախորդի, ինչպես, օրինակ՝ «Դարձեալ յիշեցէք ծնօղսն իմոց...: Դարձեալ յիշեցէք զբարէհոգի խոջայ Զահրատն, որ բազում փափազանաւք առաւ զգիրքս և նորոգել ետ զսայ, վասն հոգոյ իւրոյ Աստուած իւր տանն արքա(յ)ութիւն պարգևէ...» (Ժէ, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1984, էջ 57):

բ) Կան դեպքեր, երբ հոգնակի հայցականը ոչ թե գրաբարյան —ս հոլովակերտով, այլ ուղղականի նման՝ —վ-ով է գործածվել, ինչպես, օրինակ՝ «Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զԴաւիթ Վիրապեցի եպիսկոպոսն, և զհայրն իւր՝ զՍարգիսն, և զմայր, և զեղբարքն, և զազգականն իւր...» (Ժէ, ՀՁԷ Բ., էջ 190), «Դարձեալ յիշեցէք Խոճումն, և որդիք սորա Շահիճանին և Վարդանին, Հախումին, և Բուերքն իմ՝ Մովինարին, Մարգարտին, Արաիշին և Սիրամարգին» (ն. տ., հտ. Ա., էջ 16):

գ) Կան դեպքեր, երբ բացահայտյալը՝ գրաբարյան, իսկ բացահայտիչը տրականի ձևով է գործածվել, ինչպես, օրինակ՝ «... յիշել աղաչեմ զգործողսն՝ Վահրարին և Ղազարոսին...» (ն. տ., հտ. Բ., էջ 536), «Դարձեալ յիշեցէք զԿարապետ փահանայն, և զկողակիցն իւր՝ Նուրիպեկին...» (ն. տ., հտ. Ա, էջ 108):

դ) Կան դեպքեր, երբ անձի անունները անխտիր տրականի ձևով են գործածվում, ինչպես, օրինակ՝ «Դարձեալ յիշեցէք մեծ պապին՝ Յիսգանդարին, և կողակցին՝ Շահրստանին, և եղբարն՝ Դիւանաղին, և կողակցին՝ Մարդին, և իւր զուակացն՝ Աստուածատուրին, Պահալուին, Եթարին, և իւր ազգականացն՝ Մխիթարին, և ծնաւոյացն՝ Խաչատուրին, Հեղինին և զուակաց նոցին» (ն. տ., հտ. Ա., էջ 362):

զ) Կան դեպքեր, երբ նույն շարքում որոշ անձնանուններ՝ ուղղականի, իսկ որոշ անուններ, ընդհակառակն, տրականի ձևով են գործածվել, ինչպես, օրինակ՝ «Դարձեալ յիշեցէք զտէր Պետրոսի քնոյ զՍեդիս, զտէր Յովանէսն և Սարգիսն, Մխիթարին, տէր Յովասափին, տէր Յովանէսին, Մկրտիչին, Սիմօնին» (ն. տ., հտ. Բ., էջ 380—381), «Դարձեալ յիշեցէք զՄովսէսն և զիւր հայրն՝ Բաբուլն և մօրն՝ Քուրուանդին, կնոջն՝ Խանաղին, դստերն՝ Քուրլույանդին, որդոյն՝ Յովանիսին, հօրեղբարն՝ Եղանին, Անրէվին, մեծ պապուն՝ Մովսէսին փեսին՝ Դիլափին, ամէն» (ն. տ., հտ. Գ., էջ 329) և այլն:

Հայցականի այսպիսի տարատեսակ գործածութիւնները ինքնին ցույց են տալիս ու վկայում, որ այն ո՛չ թե նմանվել է ուղղականին կամ տրականին և դուրս մղվել հայերենի հոլովման համակարգից, այլ մի կողմից պահպանել է իր ինքնութիւնը, իսկ մյուս կողմից՝ ուղղականին և տրականին նման իր ձևերով քերականական համանուն է կազմել՝ արտահայտելով, բնականաբար, նրանցից տարբեր նշանակութիւն կամ հարաբերութիւն, հմմտ., օրինակ՝ «Նա սիրում է իր տունը և իր երեխաներին», «Նրա տունը շատ զեղեցիկ է», «Նա այդ տունը նոր է կառուցել», «Մ՛վ շի սիրում Թումանյանին և նրա ստեղծագործութիւնները» և այլն:

Քերականական համանունութիւնը տարբերվելով ուղղականից և տրականից՝ հայցականը միաժամանակ բնորոշվում է իր նշանակութիւնը կամ արտահայտած հարաբերութիւնը պայմանավորվող մի շարք առանձնահատկութիւններով:

Այսպես՝

ա) Ի տարբերութիւն ուղղականի, որ նաև Մ. Աբեղյանն է նշել, հայցա-

կանը ոչ թե անկախ, այլ մյուս թեք հստակների պես կախյալ հոլով է² և արտահայտում է այլ, հաճախ նրան հակադիր նշանակություն:

բ) Հայցականը, ինչպես հայտնի է, արտահայտում է առարկայի և գործողության միջև ուղղակիորեն դրսևորվող հարաբերություն և, իբրև բայակից հոլով, դրան համասլատասխան նախադասության մեջ հիմնականում ուղիղ խնդրի պաշտոն է կատարում:

գ) նմանվելով տրականին՝ հայցականն էպես տարբերվում է նաև նրանից, որ, բայակից հոլով լինելով հանդերձ, այլ բնույթի՝ առարկայի և գործողության միջև ոչ ուղղակիորեն դրսևորվող հարաբերություն է արտահայտում:

դ) Հայցականը իր երկձև կամ երկկերպ կազմությամբ տարբերում է անձի և իրի առումներն իրարից՝ իր նշանակող կամ իբրև այդպիսին ըմբռնվող առարկաները (լինեն անշունչ թե շնչավոր, անձ թե ոչ անձ) արտահայտելով ուղղականի, իսկ անձ նշանակող կամ իբրև այդպիսին ըմբռնվող առարկաները՝ տրականի ձևով:

ե) Անձի և իրի, որոշյալի և անորոշի առումներն արտահայտելու համար հայցականը գործածվում է առավելագույնս շորս հոմանշային ձևով, ինչպես, օրինակ՝ «Ես բակում մի երեխա (ի՞նչ) տեսա», «Ես բակում մի երեխայի (ո՞ւմ) տեսա», «Ես բակում այդ երեխային (ո՞ւմ) տեսա», «Ես բակում նույն երեխան (ի՞նչ) տեսա»:

զ) Հայցականի այդ շորս ձևերը բոլոր դեպքերում միատեսակ նշանակություն կամ հարաբերություն են արտահայտում և նրա համանշային (ավելի ճիշտ՝ նույնանշային) տարատեսակներն են, որոնք և հավասարապես նույն սեռի (ներգործական) բայի հետ են կապվում և նախադասության մեջ հավասարապես նույն քերականական պաշտոնը կատարում, օրինակ՝ սիրել՝ ո՞ւմ— մորը, հարազատի՞ն, բնկերոջը, որդուն..., սիրել՝ ի՞նչը— գիրքը, ազնվությունը, անտառը, զարուհը և այլն:

ի դեպ, դրանով են բացատրվում ուղղականաձև և տրականաձև հայցականների համատեղ գործածությունները և հաստատվում, որ նույն բայի պահանջած ուղիղ խնդիրը չի կարող արտահայտվել մի դեպքում ուղղական, մյուս դեպքում՝ տրական հոլովով:

է) Իր յուրահատուկ ձևակազմությամբ և արտահայտած հարաբերությամբ տարբերվելով ուղղականից և տրականից՝ հայցականը դրանցից տարբերվում է նաև իրեն տրվող հարցերով. եթե ուղղականը պատասխանում է ո՞վ— ով-ե՞ր, ի՞նչ(ը)— ինչե՞ր(ը), տրականը՝ ո՞ւմ— ինչի՞(ն), ո՞ւմ— ինչերի՞(ն), ապա հայցականը պատասխանում է ո՞ւմ (անձի դեպքում), ի՞նչ(ը)— ինչե՞ր(ը) հարցերին՝ դրանով ևս հաստատելով իր հոլովական ինքնությունը:

ը) Հայցականը կապային խնդրառությամբ ևս տարբերվում է ուղղականից և տրականից. եթե ուղղականն իբրև անկախ հոլով կապի խնդիր չի լինում (բացառություն են կազմում միայն ինչպես, որպես, իրև կապերը, որոնք մասնակի բացահայտիչի դեպքում բոլոր հոլովների հետ են գործածվում), ապա հայցականն իր նշանակության համապատասխան այնպիսի կապերի (նախաձև, մինչև, առ, դեպի, ի) հետ է գործածվում, որոնք ոչ միայն նախադաս շարադասությամբ, այլև նշանակությամբ են տարբերվում տրականի հետ գործածվող, ասենք, մերձ, համապատասխան, առընթեր, կից, համաձայն, այլև՝ ըստ կապերից:

թ) Հայցականը, իբրև ինքնուրույն հոլով, հատկանշվում է իրեն հատուկ փոխակերպությամբ. եթե տրականով արտահայտված խնդիրը (օրինակ՝ «Ա-

² Տե՛ս Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 399:

շակերտը մոտեցավ գրատախտակին», «Նա հանդիպեց իր բարեկամին» և այլն) չի կարող կրավորական փոխակերպման ենթարկվել, ապա հայցականով խնդիրը հեշտորեն է ենթարկվում կամ կարող է ենթարկվել նման փոխակերպման, հմմտ., օրինակ՝ «Սա սիրով եմ կարդում այդ գիրքը» և «Այդ գիրքը սիրով է կարդացվում իմ կողմից», «Թշնամիները շատ ֆաղաֆներ ու մարդկանց են ոչնչացրել» և «Շատ ֆաղաֆներ ու մարդիկ են ոչնչացվել թշնամիների կողմից», «Մայրը սիրում է աղջկան» և «Աղջիկը սիրվում է մորից», «Զյուներ պատել է դաշտերը» և «Կաշտերը պատվել են ձյունով» և այլն:

ժ) Անձնական և կամ միայն անձ նշանակող դերանունները նույն այդ հանգամանքով պայմանավորված երբեք՝ նման շեն լինում ուղղականին և բացառապես միայն տրականի ձևով են գործածվում, հմմտ. ես—իմ—ինձ (տր.)—ինձ (հայց.)—մենք—մեր մեզ (տր.)—մեզ (հայց.), դու—քո—քեզ (տր.)—քեզ (հայց.)—դուք—ձեր—ձեզ (տր.)—ձեզ (հայց.), ինքը—իր—իրեն (տր.)—իրեն (հայց.), ո՞վ—ո՞ւմ—ո՞ւմ (տր.)—ո՞ւմ (հայց.):

ժա) Հայցականը, իբրև ինքնուրույն ու անկախ հոլով, կազմում է իր նշանակութուններին համապատասխան բառակապակցութուններ, դրանցով ևս տարբերվելով ինչպես ուղղականից, այնպես էլ, մյուս հոլովներից բացի, նաև սեռականից և տրականից, հմմտ., օրինակ՝ գիրք կարդալ, նամակ գրել, երեխաներ պահել, ծառեր տնկել, բժիշկ հրավիրել, տուն կառուցել, ընկերոջը գովել, ծնողին հարգել, աշխատավարձ ստանալ, միրզ գնել, հիվանդին բուժել, երեխա(յին) խնամել... և այլն (հայցական). գինու բաժակ, առյուծի մագիլներ, գրքի կազմ, անձրևի կաթիլներ, սիրո կարոտ, ծառավի զգացում, աղջկա ձայն, որոշման նախագիծ, տարվա եղանակ... (սեռական). մոտենալ դպրոցին, հանդիպել բարեկամին, նայել երկնքին, դիպչել պատին, դնել սեղանին, զարկել ֆարին, կպչել վերին, գնալ օրսի, նստել աթոռին... (տրական):

ժբ) Հայցականն ինքնորոշվում է նաև իրեն հատուկ հոլովական մի շարք՝ տեղի, ժամանակի, շափ ու քանակի, կրող խնդրի, ներգոյականի, կամ՝ ուղիղ խնդրի, վերածման, ժամանակի, տեղի, շափ ու քանակի, գնի կամ արժեքի, նպատակի իմաստներով և դրանցով ևս տարբերվում սեռականից ու տրականից՝:

ժգ) Մյուս հոլովների պես հայցականն էլ, իր նշանակությամբ պայմանավորված, մեկ հիմնական՝ ուղիղ խնդրի և մի շարք երկրորդական՝ տեղի, ժամանակի, շափ ու քանակի, նպատակի և այլն շարահյուսական պաշտոններ է կատարում՝ այդ տեսակետից ևս զանազանվելով ինչպես ուղղականից, այնպես էլ տրականից:

Սրանք, անշուշտ, հայցականի, իբրև ինքնուրույն ու անկախ հոլովի, իսկութունը հաստատող հիմնավոր փաստեր են, որոնք միաժամանակ շատ պարզորոշ ցույց են տալիս, որ հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում այն իսկապես ո՛չ թե մեռել ու դուրս է մղվել նրա հոլովական համակարգից, այլ շարունակել է գոյատևել՝ արևելահայ աշխարհաբարում և արևելահայ գրական լեզվում արտահայտվելով յուրահատուկ, իսկ արևմտահայ աշխարհաբարում և արևմտահայ գրական լեզվում՝ նույն ուղղականի ձևով, որ, ինչպես հայտնի է, որոշ դերանունների հետ գործածվում է անգամ զ նախորդով, օրինակ՝ Զմայլած կը դիտենք զիրենք (Գր. Զոհրապ, ԵԺ, 1, 95),

³ Այդ մասին տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 411—448, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցութունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 41—126, Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջք 57—86, 214—244, 268—286:

— Ըմպեցեք զայն ցմրուր, Եթե դուք դեռ ծարավ եք (Սիամանթո, ԸԾ, 228),
— Պատվույս համար նախ զիս մեոցուց (ն. տ., 204), Հոգիս պիտի ըղձա
զանձեր՝ գոր շունի (Մ. Մեծարենց, ԾԺ, 82), Կտրեց երիկամունքները, կերավ
զանոնք հում-հում (Հ. Մնձուրի, Երկ., 53), — Ամա՛ն, ճանրմ, իմ կանչա՞ծս
կրլլա,— պատասխանեց խնդալով ու շուգելով, որ գովեմ զի՛նքը (ն. տ., 127)
և այլն:

Այս ամենն էլ շատ պարզ ու որոշակի ցույց է տալիս, որ հայցականը
զատ հոլով լինելով՝ ինքնորոշվում է քերականական համանունությունում և,
իբրև դրա մի արտահայտություն, սերտ կապի ու փոխհարաբերության մեջ է
գտնվում ինչպես ձևով նման, այնպես էլ տարբեր հոլովների հետ: Իսկ սա
էլ իր հերթին վկայում է այն մասին, որ հոլովները իրար հետ փոխկապակց-
ված մի ամբողջական համակարգ են ներկայացնում, և նրանցից յուրաքան-
չյուրը ճշտորեն կարող է որոշվել, եթե դրա բաղկացուցիչ մաս է դիտվում:

Դա հավասարապես վերաբերում է նաև սեռական հոլովին, որ ձևով նը-
ման լինելով տրականին (նաև երբեմն հայցականին)՝ բոլորովին այլ հոլո-
վական հարաբերություն կամ նշանակություն է արտահայտում և նրանց նետ
նույնպես ներականական համանուն է կազմում:

Իբրև ինքնուրույն ու անկախ հոլով, սեռականն էլ բնորոշվում է իրեն
հատուկ մի շարք իրողություններով և տարբերվում տրականից:

Այսպես՝

ա) Սեռականն արտահայտում է զուտ առարկաների միջև դրսևորվող
հարաբերություն և ըստ այդմ էլ նրանով արտահայտված մի անդամը կա-
րող է լրացնել մյուսին և լրացումների երկար շարք կազմել, ինչպես, օրի-
նակ՝ Արամի ընկերը սովորում է դպրոցում.— Արամի ընկերոջ հայրը մշա-
կում է այգին.— Արամի ընկերոջ հոր այգին գեղեցիկ է.— Արամի ընկերոջ
հոր այգու ծառերը ծաղկել են.— Արամի ընկերոջ հոր այգու ծառերի տերե-
ները կանաչ են.— Արամի ընկերոջ հոր այգու ծառերի տերևների վրա ցող է
նստել...

Հակառակ դրան, տրականը այնպիսի նշանակություն կամ հարաբերու-
թյուն է արտահայտում, որը գործողության հետ է կապվում, և ըստ այդմ
էլ նրանով արտահայտված մի անդամը ոչ թե լրացնում կամ կարող է լրաց-
նել մյուսին, ոչ թե մեկը ստորադասվում կամ կարող է ստորադասվել մյու-
սին, այլ, իբրև այդպիսիք, միայն համազոր անդամներ են գործածվում նա-
խադասության մեջ, ինչպես, օրինակ՝ նրանք նվերներ տվեցին աղջիկներին,
տղաներին, կանանց, բոլոր ներկաներին:

բ) Ի տարբերություն տրականի, որ որոշյալ առման դեպքում հող է առ-
նում, և որն էլ իրավամբ նրա համար տարբերակիչ ձևաբանական տարր է
հանդիսանում, սեռականն անխտիր առանց որոշիչ հողի է գործածվում, օրի-
նակ՝ «Տարոնի դիցուհին ... իջնում էր Քարքե լեռան բարձրություններից
Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու (Բաֆֆի, «Մամվել»),
«Մառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների նախշուն ծաղիկները...,
կարծես սփռված լինեին գուլջգուլյն գոհարներով (ն. տ.), և «Փոթորկային
գիշերին հաջորդեց առավոտը» (ն. տ.), «Այդ անցքերի մուտքերը հայտ-
նի էին միայն ամրոցի տերերին» (ն. տ.):

գ) Սեռականը տրականից տարբերվում է նաև ստացական հողով ձևերի
փոխակերպմամբ. եթե նման դեպքում սեռականը, իբրև կանոն, անհող է
մնում, ապա տրականն, ընդհակառակն, անպայման (որոշիչ) հողով է ար-
տահայտվում, հմմտ., օրինակ՝ «Ծս այսօր հանդիպեցի բարեկամիս (= իմ
բարեկամի) տղային», «Դու այսօր հանդիպեցիր բարեկամիդ (= քո բարե-

կամի) տղային» և «Ես այսօր հանդիպեցի բարեկամիս (= իմ բարեկամին)», «Դու այսօր հանդիպեցիր բարեկամիդ (= քո բարեկամին)» և այլն:

դ) Ի տարբերություն տրականի, որ ձևաբանորեն տարբերակում է որոշյալ և անորոշ առումներն իրարից՝ արտահայտելով մեկը որոշյալ հոդով, մյուսը առանց դրան կամ մի անորոշ հոդով, սեռականը, ինչպես ճշտորեն Պ. Պողոսյանն է նկատել, երկու դեպքում էլ առանց հոդի է գործածվում⁴, հմմտ., օրինակ՝ «Գլուխը կպավ ֆարի» — «Գլուխը կպավ ֆարին», «Դու գիրքը հանձնեցիր որևէ մարդու» — «Դու գիրքը հանձնեցիր այդ մարդուն» և «Գլուխը կպավ ֆարի ծայրին» — «Գլուխը կպավ այդ ֆարի ծայրին», «Դու գիրքը հանձնեցիր որևէ մարդու ընկերոջ» — «Դու գիրքը հանձնեցիր այդ մարդու ընկերոջ(ը)» և այլն:

ե) Սեռականի և տրականի, իբրև զատ հոլովների, զորավոր ապացույցներից մեկն էլ այն է, որ որոշ (հատկապես՝ անձնական) դերանունների դեպքում նրանք խստորեն նաև իրենց ձևով են տարբերվում, հմմտ. ես—իմ—ինձ—մենք—մեր—մեզ, դու—քո—քեզ—դուք—ձեր—ձեզ, նա—նրա—նրան, ինքը—իր—իրեն, այլև գրաբար՝ իմ—իմոյ—իմում, մեր—մերոյ—մերում, այլ—այլոյ—այլում, որ—որոյ—որում, ով—ո՛յր—ո՛ւմ և այլն:

զ) Սեռականը և տրականը, իբրև ինքնուրույն ու անկախ հոլովներ, իրարից տարբերվում են նաև կապային խնդրառությամբ: Հայերենում եթե կապերի մեծագույն մասը⁵ գործածվում է սեռականի հետ՝ կազմելով հատկացուցիչի և հատկացյալի յուրատեսակ կապակցություններ (օր.՝ բարեկամի, ընկերոջ, եղբոր, աշակերտի, ջրի, արդարության..., այլև՝ իմ, քո, նրա, մեր, ձեր, ո՛ւմ... մասին. ընտանիքի, քրոջ, ուսման, խաղաղության, կյանքի..., այլև՝ իր, նրա համար, այգու, գետի, ծովի, տան, պահարանի..., այլև՝ իմ, մեր, քո, ձեր, իր, նրա մեջ և այլն), ապա տրականի հետ, ընդհակառակն, սակավաթիվ կապեր են գործածվում (օր.՝ ըստ, համաձայն, համապատասխան, կից, սուրճի, մերձ...)՝ կազմելով այլ նշանակություններ արտահայտող այլ բնույթի բառակապակցություններ:

է) Սեռականն իբրև անվանակից, իսկ տրականը իբրև բայակից հոլով, իրենց շարահյուսական գործառույթներով ևս տարբերվում են իրարից: Եթե սեռականը, ինչպես հայտնի է, հատկացուցիչ (օրինակ՝ «Մուշի դաշտավայրը պաշտպանում էր երկիրը թշնամու հարձակումներից», Բաֆֆի, «Սամվել», «Քո խենթ մարմնի սարսուռները երջանկության Ախտաբորբոք արևներ են բոցավառում», Վ. Տերյան), որոշիչ (օր.՝ «Եկան գարնան անուշ օրերը», Ավ. Իսահակյան), կողմնակի ենթակայի (օր.՝ «Ընկերոջս ասածը ես չեմ մոռացել»), նաև՝ բացահայտիչ (օր.՝ «Գորիսի՛ իմ հայրենի քաղաքի շենքերը շատ գեղեցիկ են»), պաշտոններ է կատարում՝ արտահայտելով առարկաների կամ առարկայացված հասկացությունների միջև դրսևորվող տարատեսակ նշանակություններ, ապա տրականը առարկայի՝ և գործողության միջև դրսևորվող հարաբերություններ է արտահայտում՝ կատարելով անուղղակի խնդրի (հանգման, մատուցման և այլն) և պարագայական զանազան (տեղի, ժամանակի, նպատակի, շափ ու քանակի և այլն) պաշտոններ, օրինակ՝ նրա աչքերն ընկան ծնկանը (տ. պ.) դրված գրքին (հանգ. ան. խն.)» (Մուրացան), «Բոլոր իր հարստությունը բաժանեց աղքատներին (մատ. ան. խն.)» (Ավ. Իսահակյան), «ժամանակին (ժ. պ.) չի վճարում բնակարանի վարձը (Նար-Դոս), «Մենք գնում էինք դաժան հրճվանքով, որով միայն որսի (ն. պ.) են գնում» (Հ. Թ.):

⁴ Տե՛ս Պ. Պողոսյան, Սեռական հոլովը ժամանակակից հայերենում, ՊՐՀ, 1968, № 3:

⁵ Այդ մասին տե՛ս, օրինակ մեր «Արդի հայերենի կապերը», Երևան, 1955:

ը) Սեռականը և տրականը իրարից տարբերվում են նաև նրանով, որ մեկը՝ սեռականը, անկախաբար չի գործածվում և բառակապակցությունից դուրս չի հասկացվում, իսկ մյուսը՝ տրականը, ընդհակառակն, անկախաբար գործածվում և իր նշանակությամբ շատ պարզ գիտակցվում է հատկապես բանաստեղծությունների վերնագրերում, ուղերձներում, դիմումներում, հղումներում և այլն, ինչպես, օրինակ՝ «Հայ գրողներին», «Նամակ խմբագրին» (Հ. Քումանյան), «Ընկերիս հիշատակին», «Հայրենիքիս», «Ողջուն ամենքին» (Ա.վ. Իսահակյան), «Անծանոթ աղջկան», «Արարատին» (Վ. Տերյան), «Դաշնակցականներին», «Քուղթ բանաստեղծ բարեկամի», «Ընթերցողիս» (Ծ. Չարենց) և այլն:

թ) Սեռականի և տրականի զատ հոլովներ լինելու վառ ապացույց է նաև այն, որ նրանցից մեկը՝ տրականը, եթե չի կարող վերառվել և իբրև փոխանուն գործածվել, ապա մյուսը՝ սեռականը, իր իսկ պատկանելության նշանակությամբ պայմանավորված, կարող է և իբրև այդպիսին գործածվել: Նման սեռականը, որ միանգամայն իրավացիորեն հայ քերականության մեջ փոխանուն սեռական է կոչվում, արտահայտվում է սովորաբար երկակի հոգառությամբ և ենթարկվում է ՝ի հոլովման, հմմտ., օրինակ, աշակերտ(ը)՝ աշակերտի և աշակերտիներ՝ աշակերտինի, Սուրենը՝ Սուրենի և Սուրենիներ՝ Սուրենիների, ձու՝ ձվի և ձվիներ՝ ձվների, մյուսը՝ մյուսի և մյուսիներ՝ մյուսների, մյուսները՝ մյուսների և մյուսներիներ՝ մյուսներիների, օր(ը)՝ օրվա՝ օրվանը՝ օրվանի, ընկեր(ը)՝ ընկերոջ և ընկերոջիներ՝ ընկերոջինի և այլն:

Սրանք իրողություններ են, որոնք ցույց են տալիս, որ ինչպես հայցականը նման լինելով ուղղականին կամ տրականին՝ ոչ թե ուղղական է կամ տրական, այնպես էլ սեռականը նման լինելով տրականին (որոշ դեպքերում նաև հայցականին)՝ ոչ թե տրական է, այլ միանգամայն ինքնուրույն ու անկախ հոլով է և իր հաստատուն տեղն ու կշիռն ունի ժամանակակից հայոց լեզվի հոլովական համակարգում:

Գալով հեռավոր ժամանակներից՝ հնդեվրոպական հիմք լեզվից, այդ երկու հոլովները, ինչպես մատնանշել են լեզվաբանական գիտության երկու հրականներ՝ Ա. Մեյեն և Հր. Աճառյանը, նույնպես պահպանվել ու գոյատևել են հայոց լեզվում և հատուկ են ոչ միայն գրաբարին, միջին հայերենին, այլև հայոց բոլոր բարբառներին և արևելահայ ու արևմտահայ աշխարհաբարներին:

Այսպիսով՝ մի անգամ ևս պարզ է դառնում ձևով ինչպես նման, այնպես էլ տարբեր հոլովների ոչ միայն ընդհանրությունն ու ամբողջականությունը, ինքնությունն ու իսկությունը, այլև այն, որ՝ ա) հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում հայցական հոլովը ոչ թե մեռել ու դուրս է մղվել հոլովական համակարգից, այլ պահպանվել է և գրեթե հավասարապես կիրառվում է թե՛ գրաբարում և թե՛ աշխարհաբարում, բ) ճիշտ այդպես՝ սեռականը ժամանակի ընթացքում ոչ թե մեռել, ձուլվել-միացել է տրականին, դրա հետ կազմել մի հոլով, այլ նույնպես ինքնուրույն ու անկախ հոլով է:

Շարունակելով գոյատևել հայերենում, պետք է ասել, այն միաժամանակ որոշ կիրառական փոփոխություն է կրել աշխարհաբարում:

Զրկվելով ստացական դերանուններից, որ գրաբարում լայնորեն գործածվում էին գոյականների հետ ու հոլովվում (օր.՝ իմ ընկեր—իմոյ ընկերի—իմում ընկերի—գիմ ընկեր—յիմմէ ընկերէ—իմով ընկերաւ—յիմում ընկերի—իմ ընկերք—իմոց ընկերաց—իմոց ընկերաց—գիմ ընկերս—յիմոց ընկերաց—իմովք ընկերօք—յիմ ընկերս...), հայերենը, բնականաբար, ընդլայնել է սե-

ուականի գործածութեան շրջանակները և գերակշիռ դարձրել այն գրաբարի նկատմամբ:

Սեռականը նույն հոլովական նշանակութիւնը կամ հարաբերութիւնը արտահայտելով՝ ճիշտ միանման պատկեր չի ներկայացնում նաև արևմտահայերենում և արևելահայերենում. մի դեպքում այն ոչ միայն հոդ է առնում (օր.՝ «Մորաբոջը աղջիկները իր վրա ամեն տեսակ շարախոսութիւններ տարածելու մեջ առաջիններեն էին», Գր. Զոհրապ, ԾԺ, 1, էջ 7), այլև մեջ կապի հետ ներգոյականի նշանակութիւն արտահայտելով՝ ավելի շատ է գործածվում (օր.՝ «Պեղին մեջ շատ մը տղաք իր ետևեն ինկած էին գիշեր ցերեկ», ն. տ., «Երկու օրե ի վեր իր կյանքին մեջ պատահած փոփոխութիւններուն տակ ընդարմացած կը մնար» ն. տ., «Շատ մը տուներու մեջ իր տիրուհուներուն նախանձը շարժելու շափ ընդունելութիւն գտած էր...», ն. տ., էջ 3), ապա մյուս դեպքում՝ արևելահայ աշխարհաբարում ոչ միայն առանց հոդի, այլև ներգոյականի պատճառով համեմատաբար քիչ է գործածվում:

Հայերենի ձևով ինչպես տարբեր, այնպես էլ նման հոլովների իսկութիւնը, անշուշտ, հաստատվում է նաև ռուսերենի հոլովների համեմատութեամբ: Հոլովները մեծ մասամբ կամ հիմնականում միատեսակ հարաբերութիւններ են արտահայտում, և երկու դեպքում էլ ինքնուրույն հոլովներ են նաև նրանք, որոնք ձևով նման են կամ շին տարբերվում իրարից: Ունենալով հոլովական շատ մեծ ընդհանրութիւններ՝ հայերենը և ռուսերենը, իհարկե, միաժամանակ երևան են հանում նաև որոշակի տարբերութիւններ, որոնք և պայմանավորվում են նրանց, իբրև առանձին լեզուների, ներքին օրենքներով, բնույթով ու առանձնահատկութիւններով: Այսպես՝ եթե հայերենում հայցականով տարբերակվում են անձի և իրի առումները, և այն մի դեպքում նմանվում է տրականին, մյուս դեպքում՝ ուղղականին, ապա ռուսերենում հայցականով տարբերակվում են շնչավոր և անշունչ առարկաները, և այն մի դեպքում՝ սեռականին (օր.՝ Он любит своего отца), մյուս դեպքում ուղղականին (օր.՝ Он любит свой дом) է նմանվում: Եվ կամ՝ ի տարբերութիւն հայերենի, որ քերականական սեռ չունի, բառերը ռուսերենում հոլովվում են դրա իսկ համապատասխան՝ հայցական հոլովում որոշ դեպքերում շնչանկարով ո՛չ ուղղականին և ո՛չ էլ, ասեմք, սեռականին կամ տրականին, հմտ., օրինակ՝ полу. книга, սեռ. книги, տր. книге, հայց. книгу. стена—стены—стене—стену. кухня—кухни—кухне—кухню. жена—жены—жене—жену...

Մի այլ տարբերութիւն. եթե անջատման, բացառման, հեռացման նշանակութիւնը հայերենում մի առանձին հոլովով՝ բացառականով, ապա ռուսերենում, ինչպես հայտնի է, նախորդով (от, с, из) և սեռականով է արտահայտվում (օրինակ՝ из Москвы, с друга, от товарища) բավականաչափ մեծացնելով նրա ձևերի գործածութիւնը:

Այս և այլ տարբերութիւններով հանդերձ, ինչպես ասվել է, հոլովները հայերենում և ռուսերենում հիմնականում համանման հարաբերութիւններ են արտահայտում և նման հանգամանքով էլ պայմանավորված՝ նրանք մեծ մասամբ միակերպ՝ ուղղականը ուղղականով, սեռականը՝ սեռականով, տրականը՝ տրականով, հայցականը հայցականով և այլն են թարգմանվում: Առաջ գնալով հարկ է նշել, որ անհիմն մերժվող սեռական և հայցական հոլովների իսկութիւնը շատ վտու հաստատվում է նաև նրանց գործածութիւնների հաճախականութեամբ և ընդհանուր տեսակարար կշռով: Հոլովները, որ ինքնին հասկանալի է, բազմազան իրողութիւնների միջև դրսևորվող ոչ թե համանման, այլ տարբեր բնույթի ու շափի հարաբերութիւններ են արտահայտում: Ըստ այդմ էլ կան հոլովներ, որոնք, եթե կարելի է ասել, շատ ա-

վելի ծանր բեռ են կրում և ավելի շատ են գործածվում, հոլովներ էլ կան, որոնք զգալիպես զիջում են նրանց և համեմատաբար քիչ են կիրառվում: Այդ մասին, օրինակ, մեզ պարզ ու որոշակի պատկերացում է տալիս հետևյալ վիճակագրական աղյուսակը.

	Հոլով-ներ	Բաժժի «Սամվ.»»	Մուր. «Առաք.»»	Երկ. «Քառս»»	Հ. Ք. «Փարվ.»»	Ավ. Խ. «Երու.»»	Նար-Ռու «Սեզ.»»	Ե. Չարենց «Ամբոսները խել.»»	Ա. Բակունց «Ակպ. մանուշ.»»	Հ. Երսազ «Բիրիկակ.»»	Պ. Սևակ «Ելբ մի Մաշտ.»»
1.	Ուղղ.	92	94	111	72	477	101	235	84	125	318
2.	Սեռ.	111	85	78	50	423	82	110	82	186	259
3.	Տր.	8	48	18	16	83	26	27	24	65	51
4.	Հայց.	47	74	41	49	286	80	70	69	136	193
5.	Բաց.	22	11	13	12	40	16	24	14	32	62
6.	Գործ.	24	17	33	5	103	32	43	20	42	78
7.	Ներգ.	4	8	9	8	25	1	52	9	19	10

Մի կողմ թողնելով մասնակի շեղումները, որոնք պայմանավորվում են տվյալ ստեղծագործության բնույթով ու բովանդակությամբ, պետք է ասել, որ նշված վիճակագրական տվյալները շատ պարզորոշ ցույց են տալիս, որ իրենց գործածության հաճախականությամբ ու տեսակարար կշռով հոլովների շարքում ուղղականն՝ առաջին, սեռականը՝ երկրորդ, հայցականը՝ երրորդ, գործիականը՝ չորրորդ, տրականը՝ հինգերորդ, բացառականը՝ վեցերորդ, իսկ ներգոյականն էլ ամենավերջին՝ յոթներորդ տեղն է բռնում***:

Սրանք ևս փաստեր են, որոնք մի կողմից եթե նույնպես անընդունելի են դարձնում հայցականն ու սեռականը մերժելու փորձերը, ապա մյուս կողմից նրանց գոյությունն ու իսկությունն են հաստատում հայերենում:

Այսպիսով՝ անժխտելի է, որ արևելահայ գրական լեզուն ունի յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական, որոնք իրենց թե՛ արտահայտած տարբեր հարաբերություններով, թե՛ իմաստներով, թե՛ շարահյուսական կիրառություններով բավական հարուստ ու ճոխ համակարգ են ներկայացնում և բազմազան մտքերի արտահայտման լավագույն միջոց ծառայում:

Սերտորեն կապված լինելով իրար հետ և մի ամբողջական համակարգ կազմելով՝ հոլովները, բնականաբար, ունեն ճանաչողական ու իմացաբանական, ինչպես նաև գործնական-ուսուցողական մեծ արժեք ու նշանակություն: Նրանք բազմաթիվ ու բազմատեսակ շարահյուսական դեր են կատարում լեզվում՝ հատկանշվելով ոչ միայն հիմնական կամ գլխավոր, այլև երկրորդա-

*** Ընդհանուր օրինաչափությունից շեղվելով՝ ուղղականը Բաժժու «Սամվել»-ից առնված հատվածում և Հովհ. Երազի «Բիրիկական»-ում համեմատաբար քիչ է (92:125) գործածված և մի գեպրում զիջում է սեռականին, մյուս դեպքում՝ սեռականին և հայցականին:

կան մի շարք կիրառութիւններով. 1. ուղղականը՝ իբրև բառի ուղիղ ձև (բառույթ), ամենից շատ է գործածվում լեզվում և, ինչպես հայտնի է գերազանցապես ենթակայի պաշտոն է կատարում, օրինակ՝ Վաղորդյան մառախուղը հետզհետե նոսրանում էր, նրբանում էր, որքան արեգակը բարձրանում էր հորիզոնի վրա (Բաֆֆի, «Սամվել»), Այո այս ձայները հնչում էին դեռ երիտասարդի ականջում, իսկ գեղանի պատկերն ու փայլուն հայացքը չէին հեռանում նրանից (Մուրացյան, «Առաքյալ»), Արտերը ծաղկում են, ցորենն ու գարին բարձրանում են երկու թզաշափ (Շիրվանզադե, «Քառս»), Անվերջ գիշերի մոռյլ վիհերում իմ մենակ սիրտն է ցավագին ճշում (Վ. Տերյան), Եկել էին նրանք նորից (Ե. Չարենց), Ծանոթ շները չեն հաշում վրադ... , ծանոթ մարդիկ են հաշում քո վրա (Ավ. Իսահակյան) և այլն:

Նախադասութիւնի գլխավոր անդամից՝ ենթակայից բացի ուղղականով, որ նույնպես հայտնի է, արտահայտվում կամ կարող են արտահայտվել.

ա) Ստորոգելիական վերադիր կամ ստորոգելին, օրինակ՝ Սա մի գեղեցկահասուակ, սիրուն դեմքով, մեծ ու սևորակ աչքերով աղջիկ էր (Մուրացյան), Դա ստորերկրյա զանձաւորան էր (Շիրվանզադե), Միկա է նա, ով հայր է լինում (Ավ. Իսահակյան), — Ես ուսուցիչ էի գավառում (Նար-Դոս), Երգ էր կարծես կոխվել այդ, որ զնգում էր մայրամուտում (Ե. Չարենց), Աշխարհը նրա համար ընդարձակ քանգարան էր... (Ա. Բակունց) և այլն:

բ) Կոչականը, օրինակ՝ Հե՛յ նամփաներ, նամփաներ, Անդարձ ու հին. նամփաներ, Ուլքե՛ր անցան ձեզանով, Ո՛ւր գնացին, նամփաներ (Հ. Թումանյան), Եղկելի մարդիկ, փոշի կդառնան ձեր վատ սրտերը, ձեր գործերը շար (Ավ. Իսահակյան), Պտտվի՛ր, պտտվիր, կարուսել, Ես քո երգը վաղուց եմ լսել (Վ. Տերյան և այլն:

գ) Գոյական որոշիչը, որ ըստ էության հատկանշային՝ ածականի նշանակութամբ է գործածվում, օրինակ՝ Վիշապ հողմիդ հետ ազատութիւնը թող գահակայի (Ավ. Իսահակյան), Ահա Մեղտի գետի օձապտույտ ափերի մոտ երևում են Օձ քաղաքի բարձր աշտարակները (Բաֆֆի), Յնորհ հուշերով ամոքիր հոգիս... (Վ. Տերյան), Աշակերտ Արամը լավ է սովորում և այլն:

Ուղղականը իբրև բառի ուղիղ ձև է գործածվում նաև անվանական անդեմ կամ թերի նախադասութիւններում, գեղարվեստական ստեղծագործութիւնների վերնագրերում, բառարաններում, զանազան տեսակի կոչերում և այլն, ինչպես, օրինակ՝ Ահա մեր գետը, մեր զուլալ գետը (Ա. Բակունց), Առավոտ, գորշ, մոռյլ երկինք (Վ. Թոթովենց), Զինվորներ կարմիր, Ծանր ու անձրևոտ օր (Գ. Մահարի), Պանդուխտ որդին (Ավ. Իսահակյան) և այլն:

2. Սեռականը, որ գործածութիւնի հաճախականութամբ և տեսակարար կշռով զիջում է միայն ուղղականին և առարկաների միջև դրսևորվող հարաբերութիւններ է արտահայտում, հիմնականում հատկացուցչի պաշտոն է կատարում և իրավամբ էլ դրա հոլովն է կոչվում, ինչպես, օրինակ՝ ... Նույն լեռների բարձրավանդակների վրա դրած էին Տառնի իշխանների անմատչելի բերդերը և նրանց ահռելի ամրոցները... (Բաֆֆի), Նա գործարանատեր էր, քաղաքային դումալի իրավասու, քաղաքային մի քանի հանձնաժողովների անդամ, կլուբի ավագ, դպրոցի հոգաբարձու, եկեղեցու երեսփոխ... (Նար-Դոս), Զինչ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը (Ա. Բակունց) և այլն:

Հատկացուցչից բացի, սեռականով ոչ մեծ շափով կարող է արտահայտվել կամ արտահայտվում է.

ա) Գոյական որոշիչը, օրինակ՝ Եկան գարնան անուշ օրերը (Ավ. Իսահակյան), Մենութիւն խավար զնգանից կրկին Ես վերադարձա հզոր և հպարտ (Վ. Տերյան), ... Երրորդը կախ էր արել ոտքերը, աչքը ձիու ականջներին և

լուսարացի նինչով օրորվում էր ձիու հետ (Ա. Բակունց), Անցան ամռան շոգերը և այլն:

բ) Կողմնակի ենթական, ինչպես, օրինակ՝ Տիկնոջ և օրիորդի հեռանալուց հետո Պետրոսն զգաց, որ իր վրա թողած ազդեցությունն այնքան է սաստիկ... (Մուրացան), — Թող անապատի բոց հողմն իմ դեմ գա, ավազի վրայից հեռքերս ջնջե, որ մարդը երբեք տեղս չգտնի, իմ շնչած օդը մարդը չըշնչե (Ավ. Իսահակյան), Անկերոջս ասածը ես չեմ մոռացել և այլն:

Սրանցից բացի, ինչպես հայտնի է, սեռականը գործ է ածվում բազմաթիվ կապերի (մոտ, հետ, վրա, համար, պես, մասին, առթիվ, շնորհիվ, նկատմամբ, վերաբերյալ, շափ, դեմ, շուրջ, տակ և այլն) հետ և դրանց իմաստների համապատասխան զանազան շարահյուսական պաշտոնների կատարում, ինչպես, օրինակ՝ Քարի մոտ (տ. պ.) է բանում ալպիական մանուշակ, պարիսպների տակ (տ. պ.), Թեյամանի մեջ (տ. պ.) ջուրը եռաց, կափարիչը ձայն հանեց (ն. տ., էջ 238), Հնձվորը ցերեկվա մարդն էր, որին երրորդ ձիավորը պատմել էր բերդի գանձերի մասին (վ. խն., ն. տ., էջ 240), Կաքավաբերդի գլխից ամպը խխունջի պես (ձ. պ.) սողաց դեպի վրանները (ն. տ., էջ 242), Սլկունիները պատամբեցին թագավորների դեմ (անուղղ. խնդ., Բաֆֆի, «Սամվել», էջ 22), Ես սպասում էի, որ նա գեղեցիկ աղջկա հետ էլ կծանոթացներ ինձ (անուղղ. խնդ., Մուրացան, ԾԺ, 1, էջ 88) և այլն⁶:

Ինքնին հասկանալի է, որ իր՝ այդպիսի շարահյուսական կիրառություններով էլ սեռականը տարբերվում է՝

3. Տրականից, որը այլ բնույթի՝ առարկայի և գործողության միջև դըրսևորվող հարաբերությունն է արտահայտում և դրան համապատասխան ամենից առաջ ու հիմնականում իբրև հանգման կամ մատուցման անուղղակի խնդիր գործածվում, ինչպես, օրինակ՝ Այդ ամրոցը... պատկանում էր Սըլկունյաց իշխաններին (Բաֆֆի), Նրան թվում էր, թե գեղեցկուհին դեռ նայում է իրեն (Մուրացան), Վերջապես նավակը մոտեցավ ավիին (Մուրացան), Վեհություն խինդը լեռներին տվեց, Դայլայլը տվեց հավի ու հովերին (Հ. Շիրազ), Իր ցուրտ աչքերով ծովն է նայում ինձ (Վ. Տերյան) և այլն:

Ի տարբերություն սեռականի, տրականը նաև պարագայական՝ տեղի, ժամանակի, նպատակի և այլն, պաշտոններով է գործածվում, ինչպես, օրինակ՝ Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին (Վ. Տերյան), Գիծ մոծակի պարի ժամին Զարկեց հանկարծ աշնան քամին (Հ. Թումանյան), Գնում էին կայարանը գրավելու (Ե. Չարենց) և այլն:

4. Հայցականը, որ, ինչպես քանիցս ասվել է, սոսկ ձևով է նման ուղղականին (իրի առման դեպքում) կամ տրականին (անձի առման դեպքում), դրանցից էլ տարբերվում է ո՛չ միայն արտահայտած հարաբերությամբ, այլև շարահյուսական գործառույթներով: Նրանով, ինչպես հայտնի է, գլխավորապես արտահայտվում է ուղիղ խնդիրը, և որով էլ ցույց է տրվում այն առարկան, որը անմիջապես իր վրա է կրում ենթակայի գործողությունը, ինչպես, օրինակ՝ Ատում եմ նորից սեռն ու կնոջը, իր համբույրները շողոմ ու դժնյա (Ավ. Իսահակյան), Պատրիկյանը աչքերը խոնարհեց և սկսեց գլխաբեր շուռումուռ տալ ծնկան վրա (Նար-Դոս), Շատերս, ա՛խ, պիտի գոհնեք սրտերը մեր կարոտակեզ (Ե. Չարենց), Նա պոկոտում էր քարերին փաթաթված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ էր անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով ֆարը շոյում և սրբում գրերի հողը (Ա. Բակունց), ... ոչ թե աստված ստեղծեց մարդուն, Այլ մարդն իր ահից ստեղծեց աստծուն (Հ.

⁶ Կապերի և նրանց շարահյուսական կիրառությունների մասին տե՛ս նույնպես մեր «Արդի հայերենի կապերը», Երևան, 1955:

Շիրազ), Ատում եմ քեզ և քո գահը, Միահեծան գոռոզ ցար (Ա. Պուշկին) և այլն:

Հայցականով, սակայն, ոչ միայն ուղիղ խնդիրը, այլև նրա նշանակութուններով պայմանավորված, մի շարք՝ տեղի, ժամանակի, շափի, նպատակի և այլն, պարագաներ են արտահայտվում, ինչպես, օրինակ՝ Եվ ինքը թեթև սլացավ եթեր (Հ. Շիրազ), Մի առավոտ էլ վեր կացա տեսնեմ՝ բոլոր տանեցիք տխուր են (Հ. Քումանյան), Ամեն հնչյունը դարեր է ապրում, ամեն հնչյունին վերջ, սկիզբ չկա (Ավ. Իսահակյան), Կժերն ուսած թովոալով Ջուրն են իջնում աղջիկներ (Հ. Քումանյան) և այլն:

Ըստ ինքյան հասկանալի է, որ նույն կերպ՝ ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդական շարահյուսական կիրառություններով են տարբերվում ձևով տարբերվող թեք հոլովները, որոնցից էլ՝

5. Բացառականով, անջատման անուղղակի խնդրից բացի, արտահայտվում են նաև վերաբերություն, ներգործման խնդիրները և տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի... պարագաները, հմտ., օրինակ՝ Բարեկամներից հեռու տար դու ինձ: Տար ինձ, ազատիր իշխանությունից, ազատիր նրա հովանուց վայրագ (Ավ. Իսահակյան), Հեռացնում էին որդին ծնողից, եղբայրը եղբորից, կինը ամուսնուց (Մուրացան), Խոսում են Լոռու հին-հին ֆաջերից (Հ. Քումանյան), Սեղանները դատարկվում էին ընթերցողներից (Շիրվանզադե). Գլուխից փոխադրեց նրան ամառանոց (Մուրացան), Կինը կողովից հանեց պնակները և ծաղկավոր բաժակները շարեց սփռոցի վրա (Ա. Բակունց), Այս գիրքը նրան սիրելի էր դարձել մանավանդ այն օրից, երբ ուսանողական ժողովում իր հայտնի խոստումն արավ (Մուրացան), Եվ հառաչեցին լեռները ցավից..., Ցավից լանջերին խոցեր բացվեցին (Հ. Շիրազ), Սակայն ճենճերից— այդ ո՞վ չգիտի— չի մարում կրակ (Պ. Սևակ) և այլն:

6. Գործիականով, իբրև բայակից հոլովով նույնպես և՛ անուղղակի (միջոցի, ներգործման) խնդիրներ, և՛ մի շարք՝ տեղի, ժամանակի, ձևի, շափի պարագաներ են արտահայտվում, ինչպես, օրինակ՝ Ողական ամրոցը շրջապատող ծառագարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով (Բաֆֆի), Պատրիկյանը... դուրս եկավ սենյակից, դուռը փակեց կախովի կողպեքով (Նար-Դոս), Խոհարարը... վարժ ձեռքերով փետրահան էր անում նոր մորթած վառիկներ և բերանով ինչ-որ պարերգ էր շվշվացնում (Նար-Դոս), Ու մատներով արյունոտած դեմք փոված դաշտն էր փորում (Ծ. Զարենց), Փակ աչքերով էլ նա տեսնում էր կնոջ պրոֆիլը (Ա. Բակունց), Սիրով գորգուրեց, չերմ շրթունքներով համբուրեց ուղտի աչքերը վճիտ (Ավ. Իսահակյան), Ծովը սքողված էր մոխրագույն մառախուղով (Շիրվանզադե), Երկինքը լցվեց մոռյլ ամպերով (Ավ. Իսահակյան), Կառքն անցնում էր մի մեծ նավթային լճի ավով (Շիրվանզադե), Արև մի կեսօր Կաթավաբերդի ֆառավով բարձրանում էին երեք ձիավոր (Ա. Բակունց), Ոգին հիացնով հայտնվեց անձայն (Հ. Շիրազ), այլև՝ Սա մի գեղեցկահասակ, սիրուն դեմքով, մեծ ու սևորակ աչքերով աղջիկ էր (Մուրացան), ... Ֆետրե գլխաբերով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը (Ա. Բակունց) և այլն:

Բացառականով՝ հազվադեպ, իսկ գործիականով հաճախ արտահայտվում է նաև գոյական որոշիչը՝ հարակատար կամ ենթակայական դերբայի նշանակությամբ:

7. Ներգոյականով էլ, որ ուշ է առաջ եկել և հատուկ է միայն արևելահայ աշխարհաբարին, արտահայտվում են գլխավորապես տեղի և ժամանակի պարագաները, ինչպես, օրինակ՝ Շոգին մի անկյունում պտտեցնում էր մի մեծ անիվ (Շիրվանզադե), Անձիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կովի էին ելել (Ծ. Զարենց), Խանդը կայծակի պես փայլատակեց մոռյլ հնձվորի

սրտում (Ա. Բակունց), Մի գյուղացի իրենց գյուղում, Խանութ սարքել, բան էր ծախում (Հ. Թումանյան), Իսկ Վաղարշակ Ա-ի օրերում, Քրիստոսից շատ դարեր առաջ, Սլկունիները ավելի նշանակություն ստացան (Բաֆֆի), Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում, Ցավոտ սրբոտով աշխարհ լրցվեց մեր դարում (Հ. Թումանյան) և այլն:

Եզրակացություն. կատարված քննությունն ու բերված փաստերը պարզորոշ ցույց են տալիս, որ՝ ա) ժամանակակից հայոց լեզվի հոլովները սերտորեն կապվում են հին հայերենի՝ գրաբարի հոլովների հետ և այլ բան չեն, քան նրանց աստիճանական զարգացման և կրած փոփոխությունների նօր, ավելի պարզ արտահայտությունը. բ) հոլովները իբրև քերականական կարգ, որով արտաքին աշխարհի բազմազան իրողությունների ու երևույթների միջև դրսևորվող այլևայլ հարաբերություններ են արտահայտվում, հայերենում ընդհանրապես փոխկապակցված ամբողջական համակարգ են ներկայացնում և ինքնորոշվում այդտեղ իրենց բուն կամ սեփական նշանակություններով. գ) ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից հայոց լեզվում ձևով նրման հոլովները (ուղղական և հայցական, սեռական և տրական, հայցական և տրական, գրաբարի ՈՒ հոլովման դեպքում՝ սեռական, տրական և գործիական) արտահայտելով տարբեր տեսակի հարաբերություններ՝ ոչ թե նույն, այլ տարբեր բառաձևեր, այսինքն՝ ֆեռականական համաճյուղներ են և իբրև այդպիսիք զանազանվում են իրարից. դ) ըստ այդմ էլ հայոց լեզվի զարգացման ընթացքում հայցականը և սեռականը ոչ թե մեռել ու ձուլվել են ուղղականին կամ տրականին, այլ պահպանվել են և իրենց առանձնակի, անկասելի տեղն ու կշիռն ունեն ժամանակակից հայոց լեզվի հոլովական համակարգում:

Այսպիսով՝ ժամանակակից հայոց լեզվում, ինչպես շատ հայագետ լեզվաբաններ են նշել ու հաստատել, հոլովները 7-ն են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական, որոնք ճշտորեն են արտացոլում նրա հոլովական համակարգը, միասին վերցրած ունեն ճանաչողական մեծ արժեք և իրենց բազմազան կիրառություններով ու գործառույթներով կապվելով լեզվական-քերականական մի շարք իրողությունների հետ՝ որոշակի կարևորություն են ներկայացնում նաև դրանց ավելի խոր ըմբռնման և լուսաբանման համար:

Ал. С. МАРКАРЯН—Падежи в современном армянском языке.— Исследование падежей современного армянского языка показывает, что: а) они тесно связаны с падежами древнеармянского языка, грабара, и являются ярким выражением их исторического развития; б) в современном армянском языке, как и в грабаре, существуют совпадающие по форме падежи; в) как различные, так и совпадающие по форме падежи выражают разные отношения между предметами, их признаками или явлениями действительности; г) сходные падежи, отличаясь по значению, представляют собой разные формы склоняемого слова и выступают в качестве грамматических омонимов в падежной парадигме; д) по этому признаку в совр. арм. языке самостоятельными падежами являются винительный и родительный, омонимичные соответственно именительному или дательному падежам.

Таким образом, в современном армянском языке имеется семь падежей—именительный, родительный, дательный, винительный, отложительный, творительный и предложный (местный).

Все эти падежи, представляя различные формы, точно отражают падежную систему армянского языка и, несомненно, имеют познавательное, теоретическое и практическое значение.